# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-21/06 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 07.04.2021թ. կնքված համակարգչային սարքերի և նյութերի ձեռքբերման թիվ ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-21/06-4 պայմանագրում (Պայմանագիր) կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետով, ինչպես նաև Պայմանագրի 8.5 կետով: Կից ներկայացվում է կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ պայմանագրով նախատեսված ապրանքի փոխարինումն համարժեք ապրանքով:

Փոփոխության նկարագրություն՝ նոր խմբագրությամբ հաստատվել է Պայմանագրի Հավելված N 1-ը:

Փոփոխության հիմնավորում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 3-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ **«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**համակարգչային սարքերի և նյութերի ձեռքբերման**
թիվ ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-21/06-4 պայմանագրի

ք. Երևան 26 04 2021 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նորմա-պլյուս» ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Դ. Մարկոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, համատեղ հիշատակման դեպքում՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետով, հաշվի առնելով 2021 թ. ապրիլի 7-ին կնքված թիվ ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-21/06-4 գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 կետը, հիմք ընդունելով Վաճառողի կողմից 26.04.2021թ. ներկայացված առաջարկությունը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Փոխարինել Պայմանագրի Հավելված 1-ը Հավելված 1/1-ով:

1.2 Հավելված 1/1 հանդիսանում է Համաձայնագրի բաղկացուցիչ մասը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ապրանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնել անփոփոխ:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

2.5 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1570027609970100 | Հ/Հ 1570002079340100 |
| ՀՎՀՀ 01501898 | ՀՎՀՀ 00053663 |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1/1
28 04 2021թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրի

07 ապրիլի 2021 թ. կնքված
ՀՀՈՅ-ԳՀԱՊՁԲ 21/06-4 պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը, տեխնիկական բնութագիր | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 4 | 30234650 | Հիշողության կրիչ | *USB 32 GB Patriot PSF32GRBITB32U BIT (USB 3.2, Tipe-C, Black* | հատ | 3000 | 30 000 | 10 | ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | 10 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր |
| 7 | 30237490 | Մոնիտոր 24 դյույմ<br>Wide 0.248mm, 1920x1080@75Hz, contrasting 10000000:1 (DCR 5M:1), brightness 250cd/m2, 5ms (IPS matrix), 178°/178°, 75Hz, 16.7mln. colors, audio out, VGA, DVI, HDMI, 29Wt, black<br>LED 24" Philips 243V7QDSB (00/01) (IPS, 16:9, 1920x1080), 10000000:1, 5ms, VGA/DVI/HDMI)<br>Երաշխիքային ժամկետ՝ 365 օր | Philips, LED 24" Philips 243V7QDSB, Koninklijke Philips N.V | հատ | 73 200 | 73 200 | 1 | ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր |
| 10 | 30216200 | ID քարտ կարդացող սարք C290 | Amaxtek, C290, Amaxtek Electronics Limited | հատ | 4 500 | 22 500 | 5 | ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | 5 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր |

Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, համապատասխան փաթեթավորմամբ:

ԳՆՈՐԴ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898
______________
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570002079340100
ՀՎՀՀ 00053663
______________
/ստորագրություն/
Կ.Տ